





# Վերջերգ

Վահե Հակոբյանն ուշացումով հասկացավ, որ ինքն օտար է եւ ավելորդ այդ համակարգում, իսկ հայրիկի մուրհակներն էլ վաղուց են մարված

ՍԿԻՉԲԸ ԷՏ 1

փորձ, չունեն համապատասխան կամային հատկանիշներ:

Վահե Հակոբյանն իսկապես զրկված էր իր ղեկավարած կառույցում կադրային եւ այլ հարցեր ինքնուրույն լուծելու հնարավորությունից: Փորձեց աշխատակազմում ձեւավորել սեփական թիմ: Դրանում, առաջին հայացքից, արտասովոր ոչինչ չկար, բայց սեփական թիմը ձեւավորում էր ոչ թե պրոֆեսիոնալներից, այլ Սյունիքի մարզպետարանի պաշտոնյաներից, ովքեր հեռավոր պատկերացում անգամ չունեին ջրային տնտեսության մասին եւ խիստ երեւելի էին անդեմոսյան առումով, ովքեր ընդամենը Վահեի անձի կույր ցվիրյալներն էին:

Վահեի շուրջ իրավիճակի շիկացմանը նպաստեց մեկ ուրիշ հանգամանք եւս: Իշխանություններն արդեն մարել էին հայրիկի բոլոր մուրհակները եւ Սաքսիմ Հակոբյանի հանդեպ այլեւս որեւէ պարտավորություն չունեին: Վերջինս էլ, ըստ էության, վատապահ էր հավելյալ զգուշացում ստանալու «պատիվ»: Հատկապես վերջին օրերին Քաջարանում եւ Կապանում ակտիվորեն շրջանառվում էր ասեկոսեն, թե իբր կոմբինատի նախկին տնօրենը հետ է գալիս, ինչը հանրության որոշ խավեր լրջությամբ էին ընդունել: Որոշ ուժեր էլ սկսել էին բացահայտ հանդես գալ «Ձանգեզուրի պղնձամուղիբեղնային կոմբինատ» ՓԲ ընկերության նոր կառավարիչների դեմ:

Եվ, այդ բոլորով հանդերձ, ինչի՞ց բռնկվեց հրդեհը:

Ըստ մայրաքաղաքային մամուլի՝ նախօրեին Վահե Հակոբյանը «Հայքրոնոլոգի» ՓԲԸ պայմանագրային կառավարիչ, ֆրանսիական «Սաուր» ընկերության գործադիր նախագահ ժերոմ Լե Կոնտի գլխավորած պատվիրակության հետ Հովիկ Աբրահամյանի մոտ էր: Վարչապետն արդյունավետ է գնահատել ՀՀ կառավարության եւ ֆրանսիական ընկերության միջեւ համագործակցությունը, իսկ «Սաուր» ընկերության

գործադիր նախագահը հայտարարել է, թե ընկերությունը պատրաստվում է Հայաստանի ջրամատակարարման բնագավառում նոր ներդրումներ կատարել: Քննարկվել էին նաեւ ջրամատակարարման ոլորտում նոր ծրագրերի իրականացմանը, առկա իրավիճակին եւ խնդիրներին առնչվող հարցեր:

Իշխանության կուլիսներում, սակայն, շրջանառվում է կարծիքը, թե ամեն ինչ սկսվել է ֆրանսիացիների այցից:

Մեր աղբյուրները, մինչդեռ, վկայում են, որ Վահե Հակոբյանի շուրջ հրդեհն այս անգամ եւս բռնկվել է Սյունիքից:

Նոյեմբերի 2-ին Կապանում տեղի ունեցավ մի պատահար, որից էլ սկսվեց վերջին ամիսներին ստեղծված իրավիճակի հանգուցալուծումը: Այդ օրը ջրատարի վթարից տուժեց 15 բնակարան: Հաջորդ առավոտյան դեպքի վայրում էին Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, «Հայքրոնոլոգի» ՓԲԸ գլխավոր տնօրեն Պատրիկ Լորենց, Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը: Սյունիքի մարզպետը հուսահատ բնակիչներին տեղեկացրեց, որ պատահարի մասին տեղյակ է ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը, ով էլ հավաստիացրել է՝ արվելու է ամեն ինչ՝ տուժած բնակիչներին օգնելու համար: Վարչապետը կատարել է իր խոստումը՝ մեկ օր հետո՝ նոյեմբերի 4-ին, համապատասխան գումար փոխանցելով Կապանի քաղաքապետարանի գանձապետական հաշիվ՝ բնակչության կրած վնասը հատուցելու համար: Ի դեպ, իշխանության նման օպերատիվ գործելակերպը ոգեւորությամբ ու երախտագիտությամբ են ընդունել պատահարից տուժածները:

Բոլորովին այլ էր ջրտնտեսությունի՝ տարօրինակ իրավիճակում հայտնված նախագահ Վահե Հակոբյանի արձագանքը. նա փորձել է հետ քերել տուժած կապանցիներին հատկացված գումարը, քանզի փողը փոխանցվել էր իր ղեկավարած գերատեսչության միջոցներից, իսկ

ինքը՝ գերատեսչության ղեկավարը, չգիտեր այդ մասին:

Եվ, սեփական դեմքը գոնե ուշացումով փրկելու համար, աշխատանքից ազատվելու դիմում է գրում ՀՀ վարչապետին՝ վատահ լինելով, թե դիմումը կմերժվի: Սակայն Վահեի այդ ցատկոտումները տհաճությամբ են ընդունվում, եւ նրա հետագա պաշտոնավարումն անհնարին է համարվում:

Նոյեմբերի 22-ին, ղեկավարվելով ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի կանոնադրության 9-րդ կետով, վարչապետ Հովիկ Աբրահամյանը Վահե Հակոբյանին իր դիմումի համաձայն ազատում է ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի պաշտոնից:

Վահե Հակոբյանի խնդիրը, սակայն, դրանով չի փակվել: Հիմա օրակարգում նրան Գորիսի պետական համալսարանի կառավարման խորհրդի նախագահի պարտականություններից ազատելու է: Չի բացառվում նաեւ, որ Վահե Հակոբյանից պահանջվի պարզագույն մի հարցի պատասխան՝ ինչպե՞ս է դարձել միլիարդատեր՝ չունենալով որեւէ արժանիք, ունենալով տիեզերական ատելություն աշխատանքի, աշխատող, արարող մարդկանց հանդեպ: Մեծ է հավանականությունը, որ «Ձանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ում՝ Մաքսիմ Հակոբյանի կառավարման ժամանակաշրջանին առնչվող բացահայտումներն ու օրինախախտումները դրվեն իրավապահների սեղանին:

Անկեղծորեն ավստոսում եմք, որ Վահե Հակոբյանն ունեցավ նման անփառունակ վախճան: Իհարկե, ի սկզբանե սխալ էր երկրի կառավարման գործում նրան ընդգրկելը: Բայց եւ նրա ծախսողունները կարող էին այդքան արագ ու ակնհայտ տեղի չունենալ Սյունիքի մարզպետարանում եւ ջրտնտեսությունում:

Նրա ծախսողունների հիմնարար պատճառներին բանիցս եմք անդրադարձել (ավստո, որ իրեն թույլ չեն տվել հետեւել դրանց), ուստի եւ այդ հարցերին կրկին անդրադառնալն ավելորդ ենք համարում: Մի բան, սակայն, չենք կարող չհիշեցնել Վահե Հակոբյանին՝ պետք չէր խաղալիք կամ կույր գործիք դառնալ խոսքի մուրացկան, կիսագրագետ եւ փուչիկածեւ բանասարկուի եւ հայոց արեւելյան կողմերում հայտնի երկու զույգ կուրտիզամուտու անվաճ ձեռքերում:

ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

# Մեղադրվում է Գորիսի նախկին քաղաքապետը

Սյունիքի մարզի դատախազությունն արձագանքելով Գորիսի նախկին քաղաքապետի գործունեության վերաբերյալ ՁԼՄ-ների հրապարակումներին (asecose.am կայքի «Ինչ արել են՝ կարգով են արել, ինչ չեն արել՝ օրենքով կանեն, եղա՛վ. Գորիսի քաղաքապետ», aravot.am կայքի «Գորիսի քաղաքապետարանի հայտարարած մրցույթներում հիմնականում շահում է Գորիսի քաղաքապետին պատկանող կազմակերպությունը» եւ «Գորիսի քաղաքապետը պարզաբանում է»), հանձնարարել է նյութեր նախապատրաստել, ինչի արդյունքում հարուցվել է քրեական գործ:

Նախաքննությամբ պարզվել է, որ Գորիսի նախկին քաղաքապետ Ն.Ոսկանյանն իր պաշտոնավարման ընթացքում (2000-2014թթ.) հանդիսանալով պաշտոնատար անձ՝ չարաշահել է իր լիազորությունները՝ կեղծ աճուրդների միջոցով, ապօրինի հողահատկացումներ կատարելով իր եւ իր ընտանիքի անդամների անուններով: Ն.Ոսկանյանը, շահույթ ստանալու նպատա-



կով, հիմնադրել է շինարարական ընկերություն, որի ղեկավարումը եւս իրականացրել են այդ ժամանակահատվածում քաղաքապետի պաշտոնը զբաղեցնող Ն.Ոսկանյանի հարազատները: Ի դեպ, հենց այդ ընկերության հետ կնքվել են համայնքի կարիքները հոգալու պայմանագրեր, որոնցով նախատեսված գործառույթների ոչ պատշաճ կատարման հետեւանքով համայնքի շահերին պատճառվել է էական գույքային վնաս:

Նելսոն Ոսկանյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քր.օր-ի 308 հոդվածի 1-ին մաս (յոթ դրվագ) եւ 310 հոդվածներով:

ՀՀ դատախազություն  
24.11.2014

# Ձերբակալվել է՝ 751 մլն դրամի հափշտակության կասկածանքով

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում, ՀՀ ոստիկանության ԿՀԳՊ գլխավոր վարչությունից ստացված նյութերի հիման վրա, 2014թ. նոյեմբերի 24-ին հարուցվել է քրեական գործ՝ «Ղ. Տելեկոմ» ՓԲ ընկերության վաճառքի եւ բաժանորդների սպասարկման վարչության բաժանորդների սպասարկման եւ բողոքարկման բաժնի Սյունիքի մարզի սպասարկման կենտրոնների պատասխանատու Աշոտ Կույունջյանի կողմից շուրջ 751 մլն դրամի հափշտակություն կատարելու դեպքի առթիվ:

Քննության տվյալներով՝ Ա.Կույունջյանի կողմից 2010-2014թթ. ընթացքում յուրացման եղանակով հափշտակվել է իր վստահությանը հանձնված առանձնապես խոշոր չափերի՝ 751,000,016 դրամ ընդհանուր արժողությամբ լիցքավորման քարտ: Նկատարված հանցագործությունը կատարելու կասկածանքով Աշոտ Կույունջյանը 2014թ. նոյեմբերի 24-ին ձերբակալվել է:



ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցված քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:

**Ծանուցում**  
Ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՀՀ քննչական կոմիտեի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին

# Եկեք փառք փանք սուրբ հացին

Քաց դաս  
ՍԿԻՉԲԸ ԷՏ 1

րով, ժողովրդական երգերով ու խաղիկներով մանուկները ներկայացրին ոսկեշողիկ ցորենի ծլարծակունք, նրա այլուրի վերածվելը, թոնրում կարմրաթուշ լավաշ հացի թխումը: Այնուհետեւ հնչեցին ասույթներ հացի, հողի մշակի քրտնաջան աշխատանքի, հացը խնայելու մասին:

Ավագ Ա խմբի դաստիարակ Ալվինա Առաքելյանը Մեքե, որ բաց դասի նպատակն է երեխաներին ծանոթացնել իրենց պապերի սովորույթներին, մեծարել ու փառաբանել հացն ու այն արարողին, հայ ժողովրդին բնորոշ հյուրասիրությունն ու աշխատա-

սիրությունը: Սաներին ողջունեցին Սյունիքի փոխմարզպետ Վաչե Գրիգորյանը, Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեւորգյանը, ովքեր, բարձր գնահատելով մանկապարտեզի դաստիարակների աշխատանքը, մատաղ սերնդի ազգապահպան դաստիարակությունը, շնորհակալություն հայտնեցին դաստիարակներին:

Սանկապարտեզի վարիչը շնորհակալություն հայտնեց «Ձանգեզուրի պղնձամուղիբեղնային կոմբինատ» ՓԲ ընկերության տնօրենությանը, Սյունիքի մարզպետարանին, Քաջարանի քաղաքապետին՝ մշտապես իրենց աջակցելու համար:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ԱԼԵԲԵՐՏ ԻՍԱԶՅԱՆՅԱՆ. բանաստեղծ էր եւ ազգանվեր մտավորական մի այր

**Նոյեմբերի 2-ին լրացավ ԽՍՀՄ գրողների միության անդամ, մեր հայրենակից, մանկությունից երկրորդ կարգի հաշմանդամ, բանաստեղծ, արձակագիր Ալեքսանդր Իսախանյանի ծննդյան 77-ամյակը:**

Գրողների միության անդամության տոնը ստացավ 1973թ.: Իսկական տոն էր մտերիմների, հարազատների, նրա ստեղծագործություններին ծանոթ ամեն մի զանգեզուրցու համար: Այդ տարիներին մեր երկրամասից գրողների միության անդամ էին Սերո Խանգադյանը, Հանո Սահյանը, Սուրեն Այվազյանը, Գուսան Աշոտը եւ Ալեքսանդր Իսախանյանը, իսկ զեղարվեստական ստեղծագործություններ հրատարակողների թիվը չէր անցնում տասը հոգուց: Այսօր գիրք հեղինակած անծանց թիվը միայն Այունիքի մարզում անցնում է 200-ից:

Ալեքսանդր Իսախանյանի գրական ժառանգության հարցերով երբեք կզբաղվեն գրականագետները, իսկ ես ուղղակի փորձում եմ փոքրիկ ակնարկով կանգ առնել նրա ապրած լիարժեք, զարկերակային ուժեղ խփոցով կյանքի, նրա մարդկային բարձր արժանիքների, հայրենասիրության, հոգեկան կորովի, նպատակասլացության վրա:

կյանքի ընթացքում՝ հասավ ոչ լրիվ թվարկված այդ որակների շնորհիվ:

1965թ. լույս տեսավ Ալեքսանդր Իսախանյանի «Ծաղկե կամուրջ» բանաստեղծությունների ժողովածուն:

1971թ. Ալեքսանդրը հրատարակեց իր առաջին արձակ գործը՝ «Ոչ, հայրիկ, ես մեծ բան եմ կորցրել...» վիպակը, իսկ 1977թ. ընթերցողի սեղանին դրեց «Ծաղիկ իմ հեռավոր» բանաստեղծությունների ժողովածուն: Ընթերցողը մամուլից գիտեր, որ Ալեքսանդրը աշխատում է մեծ կտավի ստեղծագործության վրա: Խոսքը «Հասնիկի ճյուղը» վեպի մասին է: Ի դեպ, հայ գրական մտքի մեջ Ալեքսանդրը առաջիններից էր, որ անդրադարձավ 1946-1947թթ. հայրենադարձ հայերի խնդիրներին:

Ալեքսանդրը գնաց, կյանքը կտրուկ փոխվեց. որոշ գրողների տպագրած անարժեք գործերի վրա է գործցներում փոշի նստում, Ալեքսանդրին էլ՝ չտպագրված վեպի վրա:

Այն ժամանակ էլ, այսօր էլ, երբեմն-երբեմն ասեկոսեներ են շրջանառվում՝ եթե այդ չարաբաստիկ պատահարը չլիներ՝ Ալեքսանդրը բանաստեղծություն չէր գրի, ասել է թե՛ բանաստեղծ չէր դառնա: Քավ լիցի, այդպես չէ:

Արվեստների աստվածները միշտ էլ բարյացակամ են եղել այդ ընտանիքի



Ալեքսանդր Իսախանյան, գործ՝ Գ.Պարոնյանի եւ Մ.Ղուկասյանի

ված բազմաթիվ հողվածների, ակնարկների միայն չնչին մասն էր վերաբերում Ալեքսանդրին: 99 եւ ավելի տոկոսն ուղղված էր ընթերցողին: Տեղին է հիշել, որ Ալեքսանդրի մասին Հայաստանում առաջին անգամ ակնարկ է արվել 320 հազար տպաքանակով լույս տեսնող «Ավանգարդ»-ում, իսկ միութենական մակարդակով մի քանի տասնյակ միլիոնների հասնող տպաքանակով «Комсомольская правда»-ում: Միութենական մամուլը նրան կնքել էր «Корчагинец из Закавказья» մականունով: Մարդիկ ծրարի վրա գրում էին «Ձանգեզուր, Ալեքսանդր Իսախանյանին», եւ ծրարը տեղ էր հասնում: Ալեքսանդրի այդ օրերի փոստում օրական լինում էր 30-40, երբեմն 50 ծրար: Հազարավոր կիլոմետրերի հեռավոր, տարբեր ազգերի, ազգությունների մարդիկ նրան հուսադրում, զորավիզ էին կանգնում, իրենց ծառայություններն առաջարկում, տասնյակ աղջիկներ սեր էին խոստովանում, պատրաստակամություն հայտնում նրա հետ տանելու ճակատագրի դառը լուծը:

Այդ ամենի մեջ խիստ հուզիչ էր հեռավոր Սիբիրից մի թոշակառու տատիկի՝ ծրարով ուղարկած երեք ռուբլի օգնությունը:

Այո, նման աջակցությունն օգնեց Ալեքսանդրին՝ սեփական ուժերի նկատմամբ հավատով լցվելու, կոփելու ամուր կամք, ձեռք բերելու նպատակասլացություն, այդ նպատակին հասնելու ուղիներն ընտրելու ուժակություն: Եվ ինչից հասավ Ալեքսանդրը, հասավ հենց այդ որակների շնորհիվ, մեծ մասամբ՝ ինքնուրույն: Թերեւս ամփոփարկից էր միայն սիրելի (ոչ միայն Ալեքսանդրի, այլ նաեւ բոլորիս համար) Աշխեն մայրիկի աջակցությունը թե՛ որպես մայր, թե՛ որպես մանկավարժ, թե՛ որպես ավագ ընկեր: Ալեքսանդրի աշխատասիրության մասին իր տեղում կնշեմ, բայց պահեմ է մի բան ակնարկելու: Ինքնուրույն տիրապետում էր ռուսերենին եւ ֆրանսերենին: Վերջինիս ուսուցմանն աջակցել էր Ալեքսանդրի երիտասարդ օրերի բարեկամ եւ ընկեր, «կրկնակի հայրենադարձ», բարձրագույն երաժշտական կրթությամբ, հեռավոր Ֆրանսիայում տաքսու վարորդ աշխատող Ավետը՝ Ալեքսանդրի «Հասնիկի ճյուղը» անտիպ վեպի գլխավոր հերոսը: Ալեքսանդրը ֆրանսերենից երկու ասացվածք էր թարգմանել. «Ուրախանալու առիթներ էլի կու՛ծարձուսնա՛նք» եւ «Ե՛ս 4



Ալեքսանդրի մայրը՝ Աշխեն մայրիկը, ուսուցչուհի էր, աշխատում էր Հայկոմի 8-ամյա դպրոցում: Ամռանը երեխաներից փոքրերը՝ Լորեստան եւ Ջավենը, մնում էին մայրիկի մոտ, իսկ Ալեքսանդրը ու Հենրիկը գնում էին Քարահունջ՝ Իսախանյանի պապիկների տուն: Դժբախտ պատահարը տեղի ունեցավ այդտեղ, հեռավոր 1955թ. ամռանը. Ալեքսանդրը բարձրանում է հարեւանի պատշգամբ՝ նորոգելու վնասված էլեկտրալարը, եւ ընդամենը 1.5մ բարձրությունից վայր ընկնում՝ վնասելով ողնաշարը:

Թվում էր, թե վերջ, ամեն ինչ վերջացավ, եւ ապրելն այդ ձեռով ուղղակի բուրդ առնումներով իմաստագրվեց. դեռեւս նոր-նոր ձեռավորվող նպատակները կանաց-կանաց արդատացան եւ խառնվեցին անկողնային հետ, ուղեղը կորցրեց որեւէ բանի վրա կենտրոնանալու ունակությունը: Մնաց միայն ֆիզիկական բուք ցավը: Սա՛ տվորակյան մահկանացուներիս համար: Ալեքսանդր էլ այդպիսին էր, մեզ գնան, բայց, այնուամենայնիվ, մի քիչ տարբերվում էր: Տարբերությունը նրա ուժեղ կամքի, հոգեկան կորովի ու նպատակասլացության մեջ էր: Եվ ինչի հասավ իր ապրած լիարժեք

երեխաների հանդեպ, քաղցր աչքով նայել նրանց: Բուրդ չորսն էլ հրաշալի երգում էին, նվագում զանազան երաժշտական գործիքներ: Իսկ Լորեստան Ալեքսանդրի մահից տարիներ հետո տպագրեց բանաստեղծությունների իր առաջին ժողովածուն՝ «Հոգու երգը» վերնագրով, տպագրության էր պատրաստ նաեւ երկրորդ գիրքը: Ավաղ, նա էլ վաղաժամ հեռացավ կյանքից:

Եվ դեռ հայտնի չէ, թե ինչ ճակատագիր կունենային այդ տաղանդավոր երեխաները, եթե վաղ մանկությունից չդատարկեին անհայր մնալու դառը բաժակը:

Հրապարակախոս, արձակագիր Ջորի Բալայանն Ալեքսանդր Իսախանյանի մասին փոքրիկ ակնարկ ունի իր «Օջախ» գրքում, որտեղ ասում է. «Շատ էի կարոացել նրա մասին: Հիշում եմ, նույնիսկ ուշադրություն եմ դարձրել, որ տարբեր բաներ էին գրում նրա մասին, չնայած դրա մեջ կար շատ ընդհանուր մի բան՝ ավելորդ պաթոս»: Եվ այն ժամանակ, եւ այսօր համաձայնելով մեծ մտավորականի գնահատականի հետ՝ փոքր ուղղում եմ ցանկանում կատարել, այն ժամանակվա թե՛ հանրապետական եւ թե՛ միութենական մամուլում տպագր-

## Հասնիկի ճյուղը

Անտիպ վեպ, հատված առաջին գրքից

Առավոտվանից սպասում էի, որ ամեն վայրկյան կարող էր զանգահարել հեռախոսը, եւ որ զանգահարողն անպայման հորաքույրն է լինելու: Երեկոյան մութն ընկնելիս, անցել էի գյուղամիջյան ճանապարհով, հանդիպել էի հորաքույրս մզլահոտ սիլոսահորի հետևում եւ ճաշակելով իմ ռուսերի մեջ արծարծված վաղ մանկության այդ մզլահոտը, ես անընդհատ մտածում էի՝ ճանաչե՞լ է ինձ հորաքույրս, թե՞ չի ճանաչել:

Հորաքույրս իմ միակ հարազատն էր, որ ավելի էր ներծծված հորս հիշատակներով, քան մնացած բոլոր հեռավոր ու մոտիկ ազգականներս, եւ ամենից ավելի ես ամաչում էի հորաքույրս տխուր հայացքներից, որ երբեմն կարծես հանդիմանում էին ինձ, երբեմն էլ, երբ իմ անհոգությունն անցնում էր չափը, քնքշանքով սաստում...

Ծաղկավոր ուսաշրի մեջ իր ծերությունը փաթաթած՝ հորաքույրս երեւի փաղաքշալից հայացքով նայել էր մեքենայի հետեւից, եւ նրա աչքերում, ինչպես ասում են, լճացել էր արտասուքը՝ սպասելով իմ վերադարձի ճանապարհին: Իսկ ես քրտնաթոր արագությամբ անցել էի էլեկտրասյան մոտով, որի գունատության տակ կծկվել էր հորս՝ հիշատակներով շաղախված այդ փլուզվող կառուցվածքը, եւ բարձրանալով անդունդի վրա կախված ոլորանը՝ շրջանցող ճանապարհով վերադարձել էի քաղաք:

Ես սպասում էի, որ հորաքույրը կզանգահարեր առավոտյան, բայց զանգահարեց երեկոյան կողմ, եւ միայն այդքանը բավական էր, որպեսզի հասկանայի, թե որքան էր վիրավորված հորաքույրը...

- Հորաքույր, - փորձելով թաքցնել շփոթվածությունս՝ ես համարյա աղաղակեցի, որպեսզի խլացնեմ խոսափողի մեջ դժժացող աղմուկը:

- Հորաքույրդ է, հա... -

- Սպասում էի, հորաքույր, - ասացի ես՝ չգիտես ինչու այնպիսի զգացողությամբ, երբ գիտես, որ ամեն վայրկյան կարող եմ բացահայտել ու թաքցնել քո... կեղծիքը, որը հասկացել եմ:

- Ճանաչեցի՞ր, - հարցրեց հորաքույրը: - Իհարկե:

- Փառք աստծո, որ ճանաչեցիր, - ասաց հորաքույրը:

- Ուրիշ ո՞վ ունեն ճանաչելու, հորաքույր, - տխուր հիշեցրի ես:

- Հորդ ծառը ճանաչո՞ւմ ես:

- Ինչպե՞ս չէ, - ասացի ես, որովհետեւ հորս ճանաչելուց առաջ ես ճանաչում էի հորս խնձորենին, որ առանց քաղելու թողնում էինք համարյա մինչեւ ցրտերն ընկնելը: Թողնում էինք, որովհետեւ կարող էր հանկարծ հայրս վերադառնալ, չնայած հայրս այնպես էլ չէր երևում: Չմռանը խնձորները բուրում էին մտառում, որը սառն էր ու խոնավ, ինչպես ցրտի պատերը...

Երբ ծանրոցներ էինք պատրաստում Ռուսաստան ուղարկելու համար, ես ուզում էի մանկական իմ ամայի երեւակայությամբ պատկերացնել հորս, սակայն տեսնում էի իրար վրա կուտակվող ծառեր, որոնք, արմատներից սղոցված, տապալվում էին գետնին: Ես գիտեի, որ հայրս հյուսիսում ծառեր է սղոցում, իսկ մտառում բուրում էին խնձորները՝ սառն ու պայթուցիկ, ինչպես ռուսական ծյունը:

- Խնձորները հասել են, - հանկարծ փափկացավ հորաքույրս, ծայրի խաչուտության մեջ կոշտությունը խլացավ, ու ես սպասում էի, որ խոսակցությունը վերջանալու է հաշտությամբ:

- Արդե՞ն:

- Բա չե՞ն հասել, - ասաց հորաքույրը:

- Չգիտեի:

- Արի:

- Կգամ, հորաքույր:

- Արի, - փղծկաց հորաքույրը, թեեւ վաղուց խուսափում էր հորս՝ հիշողության ցա՛ծարձուսնա՛նք» է՛ս 5

Գրական Այունիք

# ՎԼԵՐՈՏ ԻՍԱԶԱՆՅԱՆ. բանաստեղծ էր եւ ազգանվեր մտավորական մի այր

ՍԿԻՉԲԸ ԷՅ 3

Նենանք, բայց էլ հաճույք չենք զգա» եւ «ժամանակն անցնում է, նրան արգելք չեն հանդիսանա, բայց այնպես արա, որ այն քո կողքով չանցնի»: Շատ էր դուր եկել: Մի քանի օր շարունակ հաճախ հիշում եւ բարձրաձայն բանավոր կարդում էր՝ մեկ ֆրանսերեն, մեկ հայերեն: Հարցրի՛ լավ է թարգմանել, դրա համա՞ր է անընդհատ հիշում, թե՞ ուրիշ պատճառ կա: Ասաց՝ սովորական թարգմանություն է, ուղղակի բովանդակությունը շատ է ֆրանսիական:

Նրա հետ դժվար էր չհամաձայնել: «Օջախ» գրքի նույն տեղում Ջորի Բալյանը շարունակում է. «Ալ.Իսաչանյանն իր մեջ ուժ գտավ զբաղվելու այն գործով, որին այսօր ծառայում է հավատով եւ ճշմարտությամբ: Նա շատ է կարդում, համառոտն աշխատում է իր վրա»:

Անցած դարի 60-ական թվականների կեսերից սկսած՝ Վլերոս Իսաչանյանի՝ Գորիս քաղաքի Կամոյի թիվ մեկ շենքի երկրորդ հարկի մեկ սենյականոց բնակարանը դառնում է Գորիս քաղաքի, տարածաշրջանի առաջադեմ երիտասարդության հավաքատեղին, հայտնի թիֆլիսյան Վերնատան նմանակը: Գորիսյան վերնատան երիտասարդ սաներից շատերը հետագայում դարձան տաղանդավոր բանաստեղծներ, գեղանկարիչներ, քանդակագործներ, ուղղակի հայրենասեր մարդիկ: Անուրանալի է Վլերոսի դերն այս գործընթացում:

Գաղտնիք չէ, որ մայրաքաղաքում ազգային գարոնքի վերելքին այդ ժամանակ տոն տվողները հայ պոեզիայի զույգ սյուներն էին՝ Պարույր Սեւակը եւ Հովհաննես Շիրազը: Նրանց շուրջ էին համախմբված հայ ուսանողությունը, երիտասարդությունը, առաջավոր մտավորականությունը: Գորիսում նախախնամությունը, ավելի ճիշտ՝ հենց երիտասարդությունն այդ դերում ընտրել էր Վլերոս Իսաչանյանին: Պարույր Սեւակի եւ Վլերոսի անձնական ծանոթությունը տեղի ունեցավ 1964թ. դեկտեմբերի վերջին: Մեծ բանաստեղծը Բաղիշ Հովսեփյանի եւ Արտաշես Քալանթարյանի հետ Ղափանից վերադառնալիս կանգ է առնում Գորիսում՝ մասնակցելու մեր հայրենակից, բանասիրական գիտությունների թեկնածու, Պարույր Սեւակի պոեզիայի մեծ գիտակ ու միջոցառող Նինա Հովսեփյանի ղեկավարած «Միրհավ» գրական խմբակի կազմակերպած երեկույթին: Վլերոսի բանաստեղծություններից արտասանում է քույրը՝ Լորենտան: Սեւակը հետաքրքրվում է բանաստեղծության հեղինակով: Իմանալով իրողությունը՝ վճռում է հետաձգել մեկնումը մայրաքաղաք եւ անպայման հանդիպել սկսնակ բանաստեղծի հետ: Համոզված է: Հետո համոզվումներ էլի եղան Երեւանում: Նրանց միջեւ հաստատվեց նամակագրական սերտ կապ: Սեւակը գնահատում էր գրչակից կրտսեր եղբոր տաղանդը: 1971-ին Վլերոսը Պարույր Սեւակի հրավերով պատրաստվում էր գյուղի տուն այցի գնալ նրան: Բայց չհասցրեց: Ծնվեց այս բանաստեղծությունը:

*Ասացի՛ր՝ երբ ես գալու իմ տունը,  
Ասացի՛ր՝ կգաս պարիսկ-սակարեհ,  
Քնած կլինեմ, թե հարքած կգաս,  
Յավիղ դեմ ինչ են փառքս, անունս:*

*Ասում եմ՝ եկա, ե՛րբ փար դներդ,  
Ճաք փված հողիդ վրայով արի  
Եվ պարզի՛ր, գու՛ր, ես պարզի՛ր,  
Անդիդդ,  
Ճաք փված ձանկիս արդար հոներդ:*

*Ե՛կ, անձանո՞ք եմ ու սիրոս էրած*

*Չի հաշտվում ախր քո լուսության հետ,  
Այս բազմության մեջ  
Դու իմ միակը,  
Մեկ-միտերմիկը, ու դու է՛լ մեռած:*

*Ու որբությունս ծորում է հողիդ, -  
Ես որի՞շ հողում ասելիք չունեմ,  
Մնա՛մ հիշի՛ր-ձգրի՛ր, հիմա արդարեւ,  
Նման է, Պարույր, իմ ցավը բռնին:*

Խորհրդային գաղափարախոսությունը սարսափում էր ազգային շահը պաշտպանող, նույնիսկ շոյող գրավոր խոսքից: Հիշո՞ւմ եք հայտնի անեկդոտը, երբ ՊԱԿ-ի աշխատակիցը գիշերը բերման ենթարկված երիտասարդի տարածած թռուցիկներում ոչինչ չի գտնում գրված: Դրանք սպիտակ թղթեր էին: Չինովնիկի տարակուսանքը փարատում է բերման ենթարկված ի՞նչ գրես, առանց դրա էլ ամեն ինչ պարզ է: Երիտասարդ հայրենասերների առաջին խմբակը՝ Վլերոսի գլխավորությամբ, սկսած 1963 թվականից, ձեռագիր բազմացնում է տարածում էր Զարեհի, Սեւակի, Շիրազի չտպագրված կամ արգելված բանաստեղծությունները: Դրանով նրանք կենդանի էին պահում հայ ազգային մտքի կտրված երակը: Իսկ եղեռնի 50-ամյակի նախադրյալին Վլերոսի բնակարանում, նախապես իրենց ձեռքով պատրաստված կլիշեի միջոցով, մանկիզով տպագրում են առաջին թռուցիկները (Համլետ Հովսեփյան, Մայիսիկ Ստեփանյան, Վալերիկ Դավալյան, Լորենտա, Դարո, Հենրիկ) եւ ապրիլի լույս 24-ի գիշերը տարածում Գորիս քաղաքում:

Վլերոսի բնակարանը վաղուց ՊԱԿ-ի աշխատակիցների ուշադրության կենտրոնում էր: Բարձրասարանցիները տնային կալանքի են ենթարկվում: Այո՛, Վլերոսը շրջապատված էր ուշադրությամբ եւ հոգատարությամբ, բայց միայն իր ընթերցողների, հարազատների ու մտերիմների կողմից: Պետությունը չկար, պետությունը՝ չիք: Հաշմանդամը նրա համար նոր որակի մարդ էր, ոչ թե երկրորդ կարգի հաշմանդամ, այլ երկրորդ տեսակի մարդ, որին ամսական տալիս էր 16ռ. 50 կոպեկ թոշակ եւ ասում՝ գնա՛ ապրի:

Այս պայմաններում Վլերոսն ուներ մի շատ մտերմիկ շրջապատ, որը նրան ոգի էր տալիս: Եթե լրիվ անկեղծ լինեմ, այդ շրջապատն Վլերոսի ստեղծագործության շարունակությունն էր:

Բոլորի մասին չեմ կարող գրել, ներող կլինեմ: Բայց առանց մի քանիսի չէի պատկերացնում Վլերոսի լիարյուն կյանքը: Առաջինը, իհարկե, Դարոն էր: Նա Աբոյի, մեր բոլորի լավ, բարի ընկերն էր, նա մեր վարորդն էր, մեր որսորդը, փայտահատը, ձկնորսը, խոհարարը, մեր բժիշկը, մեր ոսկեգանգուր բնության մարդը՝ Դերսու Ուզալան:

Մադոն խմբի ուրախությունն էր, մի քիչ ծուլ, ավելի շատ թույլ, բայց միշտ ժպտերես, ու սուր խոսքն ու անեկդոտը՝ լեզվին:

Լյովան է իր ընկերուհի Շուշանն ուսանող էին Գորիսի մանկավարժական ինստիտուտում: Վլերոսը բոլորիս սիրելին էր, իսկ Լյովան Վլերոսի: Էլ ուրիշ բան պետք չէ ավելացնել ասվածին: Խմբի մշտական անդամներն էին բանաստեղծ Քաջիկ Միքայելյանը, քանդակագործ-գեղանկարիչ Միքայել Դուկասյանը, գեղանկարիչներ Ռազմիկը, Անդրանիկը: Տաղանդաշատ բանաստեղծ, լրագրող Սուսաննա Բաբաջանյանն այդ շրջապատի աղջիկներից մեկն էր՝ օժտված ընկերության անդամի բոլոր իրավունքներով: Սուսաննան առանձնահատուկ հարգանք ուներ բոլորիս շրջանում:

Երբ Վլերոսի հետ երկուսով կամ երեքով էինք, ասել է թե փոքր խմբով, ես

Վլերոսի հուսալի ընկերն էի, իսկ երբ խումբը մի քիչ մեծանում էր, սովորաբար ընդդիմախոսի դերակատարում էի ունենում: Իրենց ազատ ժամանակն Վլերոսին էին համարում Հենրիկ, Ջավեն եղբայրները, իր տոհմի բազմաթիվ ազգանուններով մյուս անդամները:

Երբեմն փոքր խմբով գյուղ՝ ծնողներիս այցի էինք գնում՝ մածուն ուտելու: Մայրս էր այդպես ասում՝ եկեք մածուն կերեք: Առաջին անգամ Մադոն ասաց՝ Սաթենիկ մայրիկ, մածունը կուշանա, թե հավ կա, հավ մորթի: Ծիծաղեցինք: Հավը վաղուց մորթված էր:

Երկրորդ, թե երրորդ անգամ այս պատկերը կրկնվելուց հետո մայրս Մադոյին ասաց. «Էդ քո ասած մածունը մի անգամ կուտեն, որ համով լինի»: Մադոն խոսելու տեղ չուներ: Իսկ խամաճախի հայտնի, մի քիչ պնդաբեկ հավը մինչեւ մեր գնալն էր մայրս կրակին դրած լինում:

Նման այցելություններից մեկի ժամանակ՝ գյուղի առանձնատան ընդարձակ պատշգամբում բացված սեղանի շուրջ տեղավորվելուց հետո, մայրս մոտեցավ Վլերոսին, իր տաք աջով շոյեց նրա շատ փափուկ, բարակ, ուսերին նստած փարթած մազերը, համբուրեց գլուխն ու ասաց. «Մորդ աչքերը քոռանան, բալա՛ս»: Վրա պրծա՛ մի՛ անհծիր: Դարձավ ինձ. «Սա անե՛ծք չի, օրհնանք է...»:

Վլերոսը գլուխը հակեց մորս կրծքին...

Շատ էր սիրում երեխաներին: Մեր բուլորի երեխաների հետ խաղում էր: Երբեմն նրանց վերցնում էինք մեզ հետ: Այդ դերում հաճախ էր լինում Հենրիկի փոքրիկ Դավիթը, ով այսօր գեղեցկադեմ մի հսկա է: Հիշում եմ, ճաշում էինք Քոռ աղբյուրում: Վլերոսը հարցնում է՝ Դավիթը խորոված կարտոշկա ուղտն է, թե՞ չէ: Դավիթն իր մանկական երկաթյա տրամաբանությամբ կարելուր հասկացությունը բաժանում է երկու մասի ու պատասխանում, թե խորոված ուղտն է, իսկ կարտոշկա՛ ոչ: Իսկ մենք այդ օրը միայն դա ունեինք:

Այցելուների պակաս չուներ: Երբեք չէր խուսափում նրանց հետ հանդիպել: Գալիս էին ծանոթ, անծանոթ, գրագետ, գրասեր եւ ոչ այնքան: Վլերոսը կարողացել էր հավաքել, կահավորել թուանյանի հայտնի գրադարանի մասն գրադարան: Փառք ու պատիվ եղբորը՝ Հենրիկին, պահպանել է: Այդ ոչ այնքան գրագետ այցելուներից մեկը գիտեր, որ եկել է գրողի մոտ, մարդ, որ գրքեր է գրում: Նայեց, երկար նայեց հատակից մինչեւ առաստաղ բարձրացող գրքերի գեղեցիկ շարքերին ու հարցրեց՝ Վլերոս, ես բոլորը դո՞ւ ես գրել:

Շատ էր սիրում Սերգեյ Եսենինին ու Էռնեստ Յեմինգուեյին: Նրանց լուսանկարներն այսօր էլ իր գրադարանի տեսանելի տեղում են: Սիրած հերոսը ծերունին էր: Երեւի ուզում էր սմանվել նրան: Ես միայն հիմա եմ այդպես մտածում: Վլերոսը Հեմինգուեյի ծերունուց ուժեղ էր: Այո՛, սիրում էր Եսենին, Հեմինգուեյ, նրանց նման էլ վերջացրեց:

Իր հերոսի բազմաթիվ երազանքներից մեկն էլ «Արաքսի ափին քուլի...» ունենալն էր, սեփական տնակ, որին կարողանար առանց որեւէ մեկի օգնության մոտենալ իր մեքենայով, հոգս չդառնալ որեւէ մեկի համար, կախված չլինել որեւէ մեկից, նույնիսկ Աշխեն մայրիկից, զգալ իր լիարժեքությունը:

Բազմաթիվ հասցեներով էր դիմել, դիմումին կցել խՍՀՄ գրողների միության անդամության տոմսի պատճենը, տպագրված գրքերի ցուցակը, բայց՝ ապարդյուն: Այդ դիմումներից մեկի բացասական պա-

տասխանն այժմ էլ ինձ մոտ է: Այն ժամանակ ամոթից, նաեւ անկարողությունս թաքցնելու համար չեմ հանձնել Վլերոսին:

Մի անգամ էլ Վլերոսի դառն ամոթանքն «ուտելուց» հետո առավոտյան աշխատանքի եկա (կոմերիտմիության Գորիսի շրջկոմի առաջին քարտուղարն էի), բայց իմ գրասենյակը մտնելու փոխարեն բարձրացա կուսակցության շրջկոմի քարտուղար Ռոբերտ Ալեքսանյանի մոտ եւ որբերող անգամ պատմեցի «դարդա»: Մի քանի «քաղցրահունչ» նախադասությունից հետո ասաց, որ գտնեմ, կանչեմ քաղաքի գլխավոր ճարտարապետ Սուրեն Հարությունյանին՝ չափազանց անհրաժեշտ գործիքներով: Տասը ռուպե անց բոլորս մեքենայի մեջ էինք, ես այդքան հետո՝ Վլերոսի աչքադրած հողակտորում: Ճարտարապետը թե՛ այստեղ քաղաքի խմելու ջրի կարգավորիչ ջրամբարի տեղն է, իսկ Ռոբերտ Ալեքսանյանն ուղղակի հարցնում է, թե ինչքան տարածք է հասնում մի քաղաքացուն: 600 քառ. մետր: «Ուրեմն չափի՛ր 600 քառ. մետր Գորիս քաղաքի բնակիչ Ալեքսանյանի համար, գումարած ես այդքան խՍՀՄ գրողների միության անդամ Ալեքսանյանի համար»: Ինքն էլ օգնեց թելերի միջոցով նշագծելու հողակտորը: Հաջորդ օրն Ալեքսանյանը շնորհակալեցից արդեն իր հողակտորում: Հարգանք ու պատիվ ճանապարհների շինարարության եւ վերանորոգման վարչության այն ժամանակվա պետ Գառնիկ Մինասյանին, ով մեր խնդրանքով հարթեցրեց տեղանքը, ապագա շենքի հիմքերը հատեց, դրանք լցնելու համար ավազ եւ քար տեղափոխեց: Վլերոսի, մեր բոլորի ուրախությանը չափ չկար: Կարծես դրյակ էր ուներ ստացել:

Հետագայում Վլերոսի տան ամբողջ քարը, հատ-հատ, դաշտում ընտրեց եւ տեղափոխեց Դարոն մեր սիրելի Դերսու Ուզալան, դրանք տաշեց, դրանց ձեւ տվեց Ռազմիկ Արզումանյանը, դրանք կառուցողական յուրահատուկ սիստեմով պատի վրա շարեց դարձյալ Ռազմիկը, իսկ մենք օգնում էինք կողքից, ով ինչով կարողանում էր:

Իր ֆիզիկական ոչ լիարժեքության պայմաններում նա ձեռնոց նետեց նախախնամությանը, նրա նկատմամբ պահանջկոտ եղավ, իր ապրած կյանքով ասաց մեզ, որ ֆիզիկական արտա չունի, ու դրանով բոլորիս համար դարձավ ֆիզիկական, բարոյական կատարելության չափանիշ եւ հենարան: Նա ասաց, որ կարող է... «Ես կարող եմ գնալ այնտեղ, որտեղ դուք եք գնում, ես կարող եմ լեզուներ սովորել, ես կարող եմ երաժշտություն ստեղծել եւ երգել, նվագել, լուսանկարել, ես կարող եմ ավտոմեքենա վարել, ես կարող եմ մի քանի գիշեր մնալ ծյուների մեջ խմած վրանով, ես կարող եմ հոգեկան նեցուկ լինել ընկերներիս համար, ես կարող եմ...»:

Նա մեր յուրօրինակ խոստովանա-հայրն էր: Նրան էինք պատմում մեր ծախողված սիրտ պատմությունը, նրան վստահում ամենանվիրական գաղտնիքները, նրանից խորհուրդ էլ ուժ ստանում: Նա մասնակցում էր ընկերների հարսանիքներին, երեխաների կնուսներին, երեխայի նման հրճվում: Ահա այսպիսին էր մեր Վլերոսը՝ մեր Արն: Նուրբ էր, նաեւ անսահման նրբազգաց: Գեղեցիկ, երկար մատներով ձեռքեր ուներ, նախանձելի գեղեցիկ, ճերմակ, մարգարտաշար առողջ ատամներ:

Գիշերը չէր քնում, աշխատում էր: Քնում էր ցերեկը: Նրա առավոտը համընկնում էր երեկոյի հետ:

Մի անգամ՝ սովորականի նման, դան պայմանական թակոցից հետո դուռը բացվեց: Այդ օրն առաջին բարի լույս տվողը ես էի, Աշխեն մայրիկը դեռ առաջին հարկից չէր բարձրացել վերեւ: Գետնին թափված էին թղթի ճմռթված բազմաթիվ կտորներ: Մեկը բարձրացրի, հարթեցրի, փորձեցի աչքի անցկացնել: Աշխատում էր «Հասունիկի ծյուղը» վեպի վրա: Կտորողը մաքրեց՝ չկարդաս, կպահպանե: Թուրքը նորից ճմռթեց, գցեցի հատակին: Ուրեմն գիշերը չէր ստացվել, պլանավորված մեկ էջը «չէր գրվել»: Չէր ուզում գիշերվա ապրած տանջանքներին ընկերոջը մասնակցի անել:



Աշխեն մայրիկը ներս մտավ, դուռը բաց էի թողել:

Կարծես ճակատագիրը քիչ էր դաժան գտնվել, ինքն էլ մյուս կողմից էր հաճախ ծայրահեղ պայմաններ ստեղծում ու մեծ մասամբ հաջող հաղթահարում դրանք: Այդ ծայրահեղ վիճակները միայն իր համար չէր ստեղծում:

Մի անգամ էլ «Հազարամիլիոն»-ում էինք (Որոտանի ոռոգման ցանցի խողովակաշարի Հարթաշենի տարածքում): Հարցրեց, թե ով կարող է տասը ռուպեում երկու խողովակի մեջտեղով իջնող աստիճաններով իջնել Քարահունցի ձորը, բարձրանալ, հատել Գորիս-Կապան մայրուղին եւ դուրս գալ Քարահունցի տարածք: Ես գլուխ գովեցի: Գրագ եկանք: Նախատեսված ժամանակից երկու ռուպե շուտ տեղ հասա՝ պողպատե ճուղիկի վնասելով ձախ ձեռք: Սպիմ միջչեւ հիմա մնում է: Մնում է ստանալ նաեւ հաղթանակիս պարգևը...

Իր նախաձեռնությամբ մի քանի տարի շարունակ մեր փոքրիկ խումբը յուրաքանչյուր նոր տարվա նախօրեին՝ դեկտեմբերի 27-30-ը, անց էր կացնում Բղենո Նորավանքի տարածքի անտառում վրանի տակ: Դրանով նա ոչ միայն իր, այլ նաեւ մեր կամքն էր կոխում: Հիմա են գզում, որ դրանք իմ կյանքի ապրած (հավանաբար ոչ միայն իմ) լավագույն օրերն էին:

Օրերի հեռվից կարող են վկայել, որ նա, ապրած կյանքի օրինակով, հասարակական գործունեությամբ եւ միայն սեփական ուժերով այդ հասարակությունում գրաված դիրքով իր ժողովրդի, իր սերնդակիցների համար շատ ավելին է արել, քան իր իսկ ստեղծած, թողած գրական ժառանգությունը:

Վերջին համատեղ գիշերակացը շատ ամուր է նստած հիշողության մեջ: Երեւանից էինք վերադառնում, գնացել էինք «Արարատ»-«Դինամո» թիմի ֆուտբոլային խաղ դիտելու: Նախապես էինք որոշել, որ վերադարձին գիշերելու ենք Արիկայի ափին՝ ներկայիս «Քարի տակ» ռեստորանային համալիրի դիմաց: Այն տարիներին դա հնարավոր էր եւ անվճար էր: Առիթ չի եղել խոսքիս մեջ մշտելու, որ Ալբերտը բաց չէր թողնում «Արարատի» ոչ մի խաղ «Դինամոյի» եւ «Նեւթչու» հետ:

Ուրեմն այդպիսի մի օր էր. Ալբերտն էր, Լյովան եւ ես: Բավականին ուշ էր, երբ տեղ հասանք: Լյովան մեքենան հարմարեցրեց այնպես, որ անհրաժեշտության դեպքում հնարավոր լինի մեքենայի լուսարձակներն ուղղել դեպի սեղանը: Մեր ունեցած չունեցածը փոքրիկ, ծալովի սեղանի վրա դասավորելուց հետո պատրաստվում ենք սեղան նստել: Որտեղից որտեղ մի շուն է կանգնում դիմացներս. ասել կուզի կամ ինձ էլ ընկերակից արեք ձեզ, կամ էլ՝ իմ բաժինը տվեք: Ալբերտը մի կտոր երշիկ է նետում նրան: Շունը վերցնում է ու գնում: Չանցած մեկ-երկու րոպե՝ նորից մեզ մոտ է: Ալբերտը մի կտոր սկրոտ միս է նետում: Նույն ձեռով շունը վերցնում է ու անհետանում: Այս խաղը բավական երկար է շարունակվում: Ալբերտն արդեն չի նետում, այլ ափի մեջ շանն ուղղակի հրամցնում է մի կտոր շաքար, կոնֆետ, խմորեղեն... Նույնն է, շունը գնում է ու գալիս:

- Երեւի սա էլ վարվա օրվա նկատմամբ վախ ունի, - ասում է Ալբերտը:

Քիչ հետո ամեն ինչ իր հունի մեջ է մտնում: Ես ու Լեւոնը վրանի շրջակայքը կարգի ենք բերում: Պատրաստվում ենք հանգստանալու. Լեւոնը ավտոմեքենայում (օձից է վախենում), ես ու Ալբերտը վրանի տակ (հազար անգամ բացատրիր, որ սեպտեմբերին նույնիսկ Վայոց ձորում օձ չի լինում՝ գլուխը չի մտնում):

Շունը չկա:

- Երախտամո՞ռն շուն, իրենը ստացավ, այլևս պետք չենք, զարմանալու բան էլ չկա, պանդուկում է դաստիարակվել, - Ալբերտն է բարձրաձայն մտածում: Աշխատանքս ավարտելուց հետո վրանի ձախ պատի տակ Ալբերտի տեղն են պատրաստում փշովի ներքնակի վրա, իսկ ինձ՝ նրա դիմաց: Ինչքան էլ հաճախակի էինք վրանի տակ գիշերում, միեւնույն է, նման գիշերները միշտ էլ տարբերվում էին իրարից: Նման էին միայն նրանով, որ գիշերվա ընթացքում մի քանի անգամ զարթնում էինք Ալբերտի վիճակից տեղեկանալու համար: Նա գոտկատեղից ներքեւ ոչինչ չէր գզում: Սովորաբար երեքով կամ չորսով վրանի

տակ գիշերելու ժամանակ Ալբերտին մեջտեղ էինք առնում, եւ անհանգստանալու առիթ շատ չէր լինում: Այս անգամ երկուսով էինք, եւ զարթնելուց հետո ուղղակի հարցնում են՝ հը, ո՞նց է: Ալբերտն էլ պատասխանում է՝ լավ է, տաք է, չեն մրսում:

Առավոտյան Լեւոնն առաջինն է զարթնում, ինձ էլ զարթեցնում ու ձեռ ու ոտով հասկացնում, որ վրանից դուրս գամ: Երեւի դեռ ժամը 6-ը չկա: Գիշերը լավ ցուրտ է եղել, վրանի շրջապատի խոտածածկի վրա ցող է երեւում: Լեւոնը ցուցամատով «սուս» նշան է անում, իսկ թավ ունքերով ցույց տալիս վրանի՝ Ալբերտի հատվածի դրսի մասը: Քարանում են տեղում, մեր ծանոթ շունը պանկել է՝ մեջքը հենած Ալբերտին: Փաստորեն Ալբերտի եւ շան միջեւ միայն վրանի պատտան է: Այլ թեզ բան: Երեւի այս խելը կենդանին Ալբերտին նման ձեռով է ցանկացել հայտնել իր շնորհակալությունը:

Լեւոնի հետ մտածում ենք, թե ինչպես այս մասին հայտնենք Ալբերտին:

Մոտ կես ժամ հետո սուրճ ենք պատրաստում, սեղանը վրանի առջեւ հարմարեցնում այնպես, որ Ալբերտը նստելուց հետո տեսնի իր «անկողինը» եւ մարմինը ջերմացնող «երախտամոռ» շանը:

- Հը, ինչպե՞ս ես քնել, չե՞ս մրսել:

- Չէ, չեն մրսել: Կարծես էլեկտրական վերնակի տակ լինեի (տաճն այդպիսին ունի):

- Այդպես էլ կա, բայց ոչ թե էլեկտրական վերնակի, այլ բիովերմակի տակ: Ամբողջ գիշեր վրանի մյուս կողմից թեզ տաքացրել է այդ պանդուկի «երախտամոռ» շունը: Արի տես:

Ալբերտին օգնեցինք թեքվելու: Շունը չկար: Հասակորեն երեւում էր միայն նրա մարմնի դաջվածքը խոտերի վրա:

Նախաճաշի սեղան նստելուց հետո նա նորից երեւաց: Այս անգամ առանց ձեւականությունների ուղղակի մոտեցավ Ալբերտին: Ալբերտը չսպասեցրեց: Շոյուն էր շան գլուխը, բաշը՝ ափի մեջ նրան մեկնելով շաքարի կտորներ: Նույն ձեռով, ինչպես նախորդ երեկոյան, շունը վերցնում էր դրանք, թեքվում դեպի մեզ արդեն ծանոթ արահետն եւ քիչ հետո վերադառնում նոր բաժին ստանալու:

- Գոնե հիմա տես, թե ուր է տանում, որտեղ է թաքցնում:

Հետեւում են շանը: Վրանից 10-15 մետր հեռու՝ բարձր խոտերի հետեւում, իմ առջեւ բացվում է մի ահավոր տեսարան. գետնին պանկելած է ազդուսկրի բաց կտորվածքով մի ուրիշ շուն՝ մեր ծանոթ շան ընկերը կամ ընկերուհին: Ամեն ինչից երեւում է, որ շունը մի քանի օր է տեղից չի շարժվել, չի էլ կերել: Նախորդ օրն Ալբերտից ստացած բոլոր ուտելիքները, նույնիսկ շաքարի փոքր կտորները, երշիկի բարակ շերտերը կողք կողքի շարված են վիրավոր շան գլխի մոտ: Չի կերել, չի կարողանում ուտել: Երեւի քիչ է մնում ապրելու: Ընկերը անձնագոհությունը որեւէ արդյունք չի տվել:

Վերադառնում են: Երկու խոսքով պատմում են Ալբերտին: Խնդրում է իրեն տանել վիրավոր շան մոտ: Մինչ Լեւոնը պատրաստվում է դա անել, ես պատմամասայեթափով ջուր եմ վերցնում շան համար:

Մոտենում ենք շան ընտանիքին: Ջրով թափվող մոտեցնում են շանը: Այտուցված լեզվով մի քանի կում ջուր է վերցնում, ավելին չի կարողանում անել, էլ ուժ չունի: Լեւոնն Ալբերտին սայլակով մոտեցնում է: Ձգուշացնում են կկծի: «Չի կծի, բախտակից ընկերն են, կճանաչի»:

Շոյուն է շան գլուխը, խոսում նրա հետ. «Երջանիկ շուն ես, լավ, հավատարիմ ընկեր, բարեկամ ունես»:

Շրջվում, վերադառնում ենք վրանի մոտ:

Ձորի ստվերները բավականին կարճացել էին, երբ մենք շարժվեցինք: Ճանապարհին Ալբերտը մտածվուտ, մտախոհ էր: Այդպես երբեք չէի տեսել նրան: Հավանաբար նա իրեն, մեզ, բանական էակներին դնում էր պանդուկի՝ փշրանքներով սնվող շների կողքին, փորձում էր համեմատել մեզ համար արտոնյալ վիճակ տեղ-օձել, բայց չէր կարողանում: Շունն ինքը չէր կերել, ուտելիքն ընկերոջն էր տարել: Ինչո՞ւ: Ինչո՞ւ՝ հիվանդ ընկերոջը թողել էր մենակ եւ գիշերն իր մարմնի ջերմությամբ տաքացրել մարդուն: Մարդ արարածը դա

կանի՞: Նման բազմաթիվ հարցեր, որոնց պատասխանը հավանաբար փնտրում էր Ալբերտը, փնտրում էր Լեւոնը, փնտրում էի ես:

Այս դեպքից հետո Ալբերտի հետ այդ ճանապարհով բազմիցս անցանք, բայց այլևս ոչ մի անգամ գիշերելու համար կանգ չառանք:



Ալբերտը վաղուց չկա: Նրա մահից տասնյակ տարիներ անց ֆրանսիացի մի հեղինակի վիպակում գտա Ալբերտին ու բոլորիս հուզող բազմաթիվ հարցերից գոնե մեկի պատասխանը. մարդու մեկի բարեկամը հանգամանքների բերումով հայտնվում է բանտում: Ընկերը ոչնչով չի կարողանում օգնել նրան եւ ամեն օր քնում է իր սենյակի հատակին, որպեսզի չօգտվի այն հարմարավետությունից, որից գրկված է բանտում գտնվող իր ընկերը...

Այս ակնարկի վրա աշխատելիս թռուցիկ աչքի էի անցկացնում նրա նամակահին: Չեռքս ընկավ հեռագրի մի բլանկ: Թբիլիսիից էր: Միայն «1982» դեկտեմբերի 31-ին ես ծնվեցի: Ինձ կոչում են Ալբերտ: Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ: Ալբերտ, Շուշան, Լյովա»: Այո՛, Լեւոնը եւ Շուշանն իրենք երկրորդ որդուն տվել էին Ալբերտի անունը: Ասում են՝ հեռագիրը կարդալուց հետո Ալբերտը թրջել է աչքերը: Այո՛, Լեւոնն Ալբերտի ընկերն էր, ուրեմն ես՝ նաեւ ամբողջ խմբի: Լեւոնը Թբիլիսիից էր, իսկ ընկերուհին՝ Լեհինականից: Սովորում էին Գորիսի մանկավարժական ինստիտուտում: Լեւոնը բազմակողմանի զարգացած երիտասարդ էր: Հրաշալի երգում էր, իսկ երբ Ալբերտն էր երգում, նվագակցում էր նրան: Ալբերտի նման թավ բեղեր էր պահում եւ հպարտանում դրանով: Ասում էր, թե առանց բեղի տղամարդը նման է բեղերով կնոջ: Պատկերացրեք, որ դա ասվում է Թիֆլիսի բարբառով, եւ խոսքի սրությունն ու էկզոտիկան ապահովված են:

Ալբերտը պետք է մասնակցեր Լեւոնի ու Շուշանի հարսանիքին, բայց չգնաց Թբիլիսի: Նախորդ տարին եղել էր այնտեղ, գնացել էր՝ «Դինամոյի» եւ «Արարատի» խաղը դիտելու, ու դրանից հետո վճռել էր այդ քաղաք չգնալ այլևս: Չեն կարող հիասթափության պատճառն ասել, բայց նա այդպես էր վճռել: Հարսանիքին մասնակցեցին Դարոն եւ Հենրիկը: Այո՛, Լեւոնն ու Շուշանն իրենց որդուն կոչել են Ալբերտի անունով:

Ճակատագիրը դաժան եղավ նաեւ Լեւոնի նկատմամբ: 1989թ. հեռավոր Չերքեզիայում ավտովթարի զոհ դարձավ: Այդ մասին իմանում ենք բավականին ուշ, պատահականորեն: Լեւոնի եղբայրը հեռավոր ռուսաստաններում հանդիպում է մեր հայրենակիցներից մեկին: Հարցնում է՝ ճանաչո՞ւմ եք Ռեդիկին, Մարոյին կամ Դարոյին: Գորիսեցի երիտասարդը հայտնում է, որ Դարոյին՝ Վարոսի տղային, ճանաչում է: Լյովայի եղբայրը Դարոյին անձամբ ճանաչում էր, իսկ մեր մասին էլ շատ էր լսել: Հայտնում է, որ Լյովան զոհվել է ավտովթարից: Գունար է ուղարկում մեզ՝ Ալբերտի գերեզմանին այցելելու, նրա ու Լյովայի հիշատակին բաժակ բարձրացնելու համար:

Այդպես իմացանք նաեւ Լյովայի չլինելու մասին:

Դա իմ վերջին շփումն էր մեր հրաշալի, անմոռաց ընկերոջ ընտանիքի հետ:

Մի քանի տարի անց, երբ համացանցը մատչելի դարձավ, «одноклассники» կայքից ակնաջով է ընկնում «Էրոյան» շատերի համար տարօրինակ, բայց ինձ ծանոթ ու հարազատ ազգանունը: Հարսիս հարցնում են՝ կարո՞ղ է գտնել այդ մարդուն: Մեկից մեկ՝ «Հարցրու՝ ճանաչո՞ւմ է Լյովա կամ Լեւոն անունով մեկին»: «Հայրս է, ո՞վ է հարցնում»: Արդեն ներկայանում են. «Ես հայրիկիդ ընկերն եմ: Դու Ալբերտն ես»: «Այո»: Այդպես մենք վերագտանք իրար եւ կապ հաստատեցինք: Ալբերտը հեռավոր հաբարովսկում է, մայրը՝ Շուշանը, եւ եղբայրը՝ Միհրանը, Գյումրիում են: Շուշանը չորս թռան տատիկ է: Երազում ենք հաջորդ տարի ուշ զարմանալ ընտանիքներով հանդիպել:

Իսկ Ալբերտ Իսաջանյանը մահացավ 1983թ. ապրիլի 29-ին, հողին հանձնվեց Քարահունցում, այդպես էր կամեցել ինքը: **ՌԵԴԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

## Հասմիկի ճյուղը

### Անտիպ վեպ, հատված առաջին գրքից

ՍԿԻԶՐԸ ԷՋ 3

Վից իմ ներկայությամբ լաց լինելուց, - արի՛ հորդ մասունքները վայելիր:

- Լավ, հորաքույր, - ասացի՝ սպասելով միջեւ հորաքույրը կոներ խոսափողը:

Հասմիկն անհանգիստ շարժվում էր բազկաթռի մեջ, երբ խոսակցությունը երկարեց, Հասմիկն սկսեց դիտավորյալ աղմկել, որպեսզի հասկացներ իր գոյությունը: Ես ներծծում էի իր փխրունության անգիտակից նրա մարմնի թավշյա արձագանքները եւ դրանցից տարածվող այն յուրօրինակ բույրը, որ ունենում են բոլոր աղջիկներն իրենց պատանության տարիքում:

Խոսափողը դնելուց հետո ես լցրի բաժակները եւ հնաոճ, կաղնու փայտից զարդանախշած բազկաթռը իրեցի առաջ՝ իմ հորից մնացած այն միակ ժառանգությունը, որ մանկության հիշողությունների մեջ, երեկ լինեի, թե ուրախ-արեւախառն առավոտ, դատարկ էի պատկերացնում, եւ երբեմն միայն հորաքույրն էր երկյուղած խնամքով սրբում բազկաթռի վրայից չարագուշակ փոշին...

- Ուզում ես խմե՞լ, - չհավատալով, որ Հասմիկը պատրաստվում է խմելու՝ հարցրի ես:

- Ուզում եմ:

- Չէի սպասում, - թաքցրած ուրախությամբ ասացի ես եւ անմիջապես էլ զղջացի. դա հենց իմ սպասված ուրախությունն էր, որը հանկարծ կարող էր չբանալ՝ մի վայրկյանում, իմ մի անզգույշ վերաբերմունքից:

- Վա՛տ է, - սարսափով հարցրեց Հասմիկը:

- Ո՛չ, ինչո՞ւ:

Ես փորձեցի հիշել, թե առաջին անգամ ինչպիսի տրամադրությամբ եմ ճաշակել դառն ու հաճելի, սփուփիչ ու դավաճան այդ խմիչքը եւ ում ընկերակցությամբ: Արդյոք գիտվության մշուշի մեջ ինձ մոռանալո՞ւ եւ կամ ինքնագոտնումի՞ հուսահատ ճի՞գ էր եղել իմ առաջին փորձությունը, թե՞ պարզապես թեթեամիտ տղայություն: Եվ մանավանդ՝ ո՞ւմ ընկերակցությամբ էր քննություն բռնել դա՞ իմ առաջին, թեթեամիտ տղայությունը...

Ես ուզում էի վերհիշել ու չէի կարողանում, ինձ թվում էր, թե իմ կյանքի բոլոր արարողությունները պետք է որ կատարված լինեին Հասմիկի ընկերակցությամբ, այնքան հասմիկային ու թափանցիկ էր նրա ներկայությունը, որ դրանից այն կողմ մտածելն անհեթեթ էր դառնում:

Մենք երկուսով նստել էինք հախճապակու նման փայլուն սեղանի շուրջը, եւ որտեղից որտեղ ինձ հանակեց տարիների միջով հետ գնալու ու Հասմիկի մանկությանը լուծվելու անհարին ցանկությունը: Դա մի ահավոր-սիրելի աշխարհի պիտի լինե՞ր՝ Հասմիկի մանկությունը, եւ ես կուզեմայի ունենալ այդ աշխարհն իմ հիշողության ծալքերում...

- Ուրիշ գի՞մի չունե՞ս, ավելի դառնահամ, - շրթունքները տհաճությունից կծկելով հարցրեց Հասմիկը:

- Ունե՞ս..., - Ես ուզում էի լիցքաթափվել իմ այդ արտառոց ցանկությունից, ինչպես կայծակից հետո բոլոր ծառերն են լիցքաթափվում, բոլոր հեռագրալարերը եւ նույնիսկ ինչպես այգու թփուտներում պահված Հասմիկի ճյուղը՝ ես ուզում էի լիցքաթափվել, որպեսզի հիշեի, թե երբվանից էր մնացել մի շիշ կարմիր-թմրեցուցիչ «Շամպայն» եւ որտեղ էր մոռացվել ինչ-որ մի աղմկուտ երեկոյից հետո, գրապահարանի ներքեւի դարակո՞ւմ, մահճակալի տակ կուտակված դատարկ շշերի՞ մեջ:

- Սա քաղցր է, - ասաց Հասմիկը:


- Հիմա կզտնեն:

- Ես փնտրե՞մ...

- Փնտրիր..., - Հասմիկը փայլում էր հաճույքից, ես հասկանո՞ւմ էի, թե՞ չէի հասկանում փնտրելու նրա ուրախ ցանկությունը: Նա փակեց աչքերը: Ես լսում էի բացվող ու փակվող դարակների երանելի ՇՈՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՋ 6

Գրական Այունիք

# Պատանի պոետը



**Ալբերտ Իսախանյանին եւ հանդիպեցի մի երկու տարի առաջ՝ աշխարհ, Գորիսի շրջանի Քարահունջ գյուղում՝ հրենց տան պատշգամբում պառկած: Նա չկարողացավ բարձրանալ պեղից. գամված էր անկողնուն:**

Կույր դիպվածը վրա է հասել, երբ նա տասնվեց տարեկան աշխույժ եւ ուշին պատանի է եղել: Դարեւանի կտրված լույսը կապելու ժամանակ ընկել է էլեկտրական սյունից եւ... գամվել անկողնուն:

Ալբերտը շատ ընթերցող, շատ լիրիկական սրտի տեր տղա է: Անկողնուն անշարժ պառկած՝ նա մեծ տոկոսությամբ մաքառում է դժբախտության դեմ, վանում աղետի պատճառած հուսալքությունը: Նա բուռն է սիրում կյանքը, հայրենի բնությունը, երկրի կապույտը, որը թեւեւ պատուհանի անցքից է տեսնում միայն, բայց կարծես ապրում է նրա հետ, նրա շնչով: Նա բանաստեղծի հոգով է զգում ծաղիկների բույրը, յուրովի տեսնում հայրենի լեռնաշխարհի գույները, նրա սքանչելի պատկերը՝ ծաղկած բալենիներ, սպիտակ ջրվեժներ, գարնան զարթոնքը, աշնան բոցկտացումը եւ դրանց մեջ բողբոջած իր առաջին սերը՝ իր հեռու սերը՝ ջինջ աղբյուրի ակունքի պես եւ երագուն, ինչպես երկնքի հեռավոր լազուրը:

Ոչ մի պահ Ալբերտը չի կորցնում իրեն, չի նվազում: Նրա լիրիկան մուրբ է, ցողաթաթախ, պատանեկան ջերմությամբ լի: Դրանք միշտ լավատես, միշտ ապրող, բարբախող սրտի թրթիռներ են, դրանք արեւին ու կյանքին կառչած, դժբախտությունն արիաբար հաղթահարող մարդու երգեր են: Այդ երգերի մեջ ջերմություն ու վարակիչ քնքշանք կա: Իսախանյանի բանաստեղծությունները հաստատում են կյանքը, վանում հուսալքությունը, աղետը: Նա հավատում է կյանքին, ցնծությամբ ընկալում նրա գեղեցկությունները: Եվ դա նրա՝ այդ պատանի պոետի, ասել է նաեւ նրա սերնդի հոգեկան արիության մեծ վկայականն է:

Ես սիրով կազմեցի, խմբագրեցի Իսախանյանի բանաստեղծական այս համեստ ծաղկեփունջը՝ ողջունելով նրա աշխարհ գալը: Դավաճանած եմ, որ այդ ծաղկեփունջը հաճույք ու բավականություն կպատճառի շատ ընթերցողներին:

**ՍԵՐՈ ԽԱՆՁԱՂՅԱՆ**  
**«Ծաղկե կամուրջ» գրքի առաջաբան 1964թ.**



# Օջախ



Գորիսում առաջին օրն այցելեցինք երիտասարդ բանաստեղծ էլ արծա-կագիր Ալբերտ Իսախանյանին: Դրանք գնացինք կոմերիտմիության շրջկոմի առաջին քարտուղար Ռադիկ Դարբասյանի հետ: Ես վաղուց գիտեի գրող Իսա-խանյանին: Շատ էի կարդացել նրա մասին: Դիտում եմ, նույնիսկ ուշադրություն եմ դարձրել, որ տարբեր բաներ էին գրում նրա մասին, չնայած այդ բոլորի մեջ կար մեկ ընդհանուր բան՝ ավելորդ պաթոս: Պարզվեց, որ Ալբերտը շատ համեստ մարդ է, եւ ինքն էլ է դժգոհ իր մասին գրված ակնարկների ճռռոտություններից: Ծակատագիրը դաժան է եղել նրա նկատմամբ: Դա պատահել է լեռնային գյուղում, որը կրում է Դայաստանում շատ տարածված անուն՝ Քարահունջ: Տասնու-թամյա պատանին ամպրոպից հետո պատշգամբով ուզում է բարձրանալ էլեկտրասյան վրա: Էլեկտրալարը կտրված էր, եւ պատանին ուզում էր լույս տալ

գյուղին: Սակայն վայր է ընկնում: Ընկնում է եւ վնասում ողնաշարը: Եվ այդ ժամանակից ի վեր, ահա արդեն տասնութ տարի, Ալբերտը գամված է անկողնուն՝ անդամա-լույծ ոտքերով: Ամբողջ հանրապետությունը գիտե նրա ճակատագրի մասին, գիտեն մեր երկրում եւ արտասահ-մանում: Գիտեն եւ այն մասին, որ Իսախանյանն իր մեջ ուժ գտավ զբաղվելու այն գործով, որին այսօր ծառայում է հավատով եւ ճշմարտությամբ: Նա սկսեց գրել: Արդեն լույս են տեսել Ալբերտի երեք գրքերը՝ արծակ եւ չափածո: Այժմ հրատարակության է պատ-րաստվում վեպը: Ինձ թվում էր, թե Ալբերտը երեւի իրար տեսեից «թխում» է դրանք: Զէի պատկե-րացնում, թե ինչ կարելի է գրել տանը նստած: Ու հանկարծ՝ վեպ: Այն էլ երկհատորանի: Եվ հիմա էլ հեղինակը ավարտում է երկրորդ վեպը: Պարզվեց, որ Ալբերտը ձեռքով դեկավարվող ավտոմեքե-նայով շատ է ճանապարհորդում հայրենի երկրում: Դանդիպում է իր ապագա հերոսների հետ: Նա շատ է կարդում, ինչպես ասում են՝ համառորեն աշխատում է իր վրա: Եվ որ ամենազվախվորն է՝ դավանում է մի սկզբունքի, որի մասին ժամանակին խոսել է Մա-յակովսկին: Երբ մեծ բանաստեղ-ծին հարցրին, թե առաջին հերթին նա ում կիրառարարները Զուկոտ-կայից եկած բանաստեղծին, թե՞ մոսկվացի բանաստեղծին, Մայակովսկին պատասխանել է. «Իհարկե, առաջին հերթին Զու-կոտկայից եկածին, բայց միայն մի պայմանով՝ հավասար տաղանդ-ների դեպքում»:

Այս սկզբունքին հավատա-րիմ՝ Ալբերտ Իսախանյանը ոչ մի գիշուն չի ընդունում: Ձիջունը վիրավորում է նրան: Քանզի նա բանաստեղծ է:

**Ջորի Բալայան,**  
**հատված գրքից, 1978թ.**

# Հասմիկի ճյուղը

Անտիպ վեպ, հատված առաջին գրքից

ՍԿԻՉԲԸՆ ԷՏ 3

արդունկը՝ ասես իմ նյարդերի ամենից թա-քուն ճանապարհով լույս էր թափանցում իմ էության մեջ:

Լույսի հանկարծակի բռնկումից այդ-պես փակում են աչքերը, բայց լույսի տապալիրությունը դեռ շարունակվում է ծավալվել բիբերի ու մեջ՝ փակված կոպերի վրայից: Սեղանին գինու հետքեր էին մնա-ցել, կլոր ու աղճատված շրջանակներով, որոնք խունացած արյան բծեր էին հիշեց-նում:

Հասմիկը կրանստել էր գրապահարա-նի եւ պատի արանքում եղած իր անձկու-թյան մեջ, եւ տեսքն այնքա՛ն անօգնական էր երեւում, երբ չէր գտնում «Շանայանի» կիսատ շիշը: Անգորությունից նա կրծում էր եղունգները, ու դրա համար ես քնքուշ խղճահարությամբ էի լցվում նրա հանդեպ: Ինձ թվում էր, թե ես ընդունակ էի կյանքում դիմելու ամեն մի անհնարին գոհաբերու-թյան, միայն թե կատարեի նրա բոլոր ցան-կությունները: Ես մտածում էի, որ հիմա հարբելու եմ Հասմիկի հետ, որովհետեւ այդպես էր ուզում Հասմիկը, ես նույնպես այդպես էի ուզում ու որովհետեւ չէի կարո-ղանում հիշել, թե առաջին անգամ ինչպի-սի տրամադրությամբ եմ ծաշակել դառն ու հաճելի, սփոփիչ ու դավաճան այդ խմիչքը եւ ում ընկերակցությամբ...

Ես չէի հասկանում, որ ինքնաբերա-կան շնչանքի ազդեցության տակ ընկնում եմ մոլորության մեջ, կարծում էի, թե այ-

սօր առաջին անգամ եմ հայտնագործում ամենողություն, սեր ու հավատարմություն առեղծվածները: Համենայն դեպս, այդ ինքնախաբեությունը գտնված, փայլուն եւ ինքնաբերա էր լինելու, այդ ինքնա-խաբեության մեջ եմ պահպանվում սիրո՝ ապագայում էլ չհնացող հիշատակները...

Այն զգացողությունը, որ այդ օրը Հաս-միկն իմ կողքին էր եւ նիհարվում ու բա-րախի ոտքերը թաքցրել էր սեղանի տակ՝ ձեւավորվող տարիքի եւ կարծես թե շո-քի այդ հարշակերախ խառնուրդը, եւ որ երեկոյան այդպիսի շոգ պատերին միշտ իմ կողքին էր լինում, հաճելի քնքշանք էր խոստանում, ինչպես գինովությունը, որին պատրաստվում էինք տրվելու...

Նրա սանրվածքը դուր էր գալիս ինձ. հիշո՞ւմ եք Ջոկոնդայի սանրվածքը, հի-շո՞ւմ եք, թե ինչ սարսուռ է պատճառում կնոջ հավիտենական, հավերժ թարմու-թյան զգացումը, նրա սանրվածքն այդպի-սին էր, միայն թե Ջոկոնդայի սանրվածքի մեղմության մեջ, թեթեւ ու եթերային թար-մությամբ սեղմված շրթունքների վրա: Ես կանխագուճ էի, Աստված իմ, ինչպե՛ս էի կանխագուճում նրա աղջկական ծայրի ռնգային հավատարմությունը, եթե սկսեին խոսել այդ շրթունքները...

Իսկ առաջին հանդիպման ժամա-նակ ամենից հրապուրիչը երեւի Հասմիկի շրթունքներն էին, նրա բերանն ու շրթունք-ները, որ անշարժացել էին առաջին համ-բույրի տագնապալի սպասումից: Եվ պա-տանեկան տարիքի փայլն ամենից ավելի զգացվում էր դրանցում՝ այդ տագնապալի մեղմության մեջ, թեթեւ ու եթերային թար-մությամբ սեղմված շրթունքների վրա: Ես կանխագուճ էի, Աստված իմ, ինչպե՛ս էի կանխագուճում նրա աղջկական ծայրի ռնգային հավատարմությունը, եթե սկսեին խոսել այդ շրթունքները...

«Սիրո տարիքում... - մտածում էի ես, - ամենից գեղեցիկն ու խրախճալին, որ կորցնում ենք հետո, սիրո հոտառությունն է լինում, եւ բոլորս առաջնորդվում ենք դրանով՝ սիրո հոտառությամբ...»: Ես այն

ժամանակ կիսաբաց էի թողել դուռը, եւ հանկարծ անհետք թվաց, վիրավորական լինելու չափ անհետք, ինձ ինչ-որ հեռա-վորության վրա պահելու, իսկ Հասմիկին իր տագնապների անդունդի վրա սպա-սեցնելու իմ տղայական վերաբերմուն-քը: Ես ուղղակի չէի խնայում Հասմիկին, դա անգթություն էր, իմ այն ժամանակվա անգթությունը, չնայած երբ գնում էի դուռը ծածկելու, թիկունքիս վրա զգում էի այդ... տագնապալի հոտառությունը:

Ես շրջվեցի եւ տեսա, որ Հասմիկը յու-ղաների մեջ թաթախված վրձինը խաղա-ցնում է ափերի մեջ՝ չզգալով, որ յուղաների վառ կարմիր ու ալիքավոր դաջվածքներ են գոյացել ձեռքերին:

Ես երեք գույնի այդպիսի պայծա-ռություն չէի զգացել վառ կարմիր ու ալիքավոր դաջվածքներ աղջկական ձեռ-քերի ճերմակության վրա, գուցե դա տրա-մադրությունից էր, ես նայում էի դրանց՝ այդ դաջվածքներին, իսկ Հասմիկը բարձրաց-րեց հայացքը եւ հանկարծ անշարժացավ. այդպես լույսի անսպասելի բռնկումից փխրում գատկաբեզել է անշարժանում ծաղկի առեղծվածի մեջ:

Ես վերադարձա եւ բռնեցի նրա ձեռ-քերը, դրանց թափանցիկ մաշկի տակից ես զգում էի Հասմիկի փխրուն մատնա-հողերի հպումն իմ ափերին, երբեմնի այն հաճույքի նման, որ ապրել ենք բոլորս մեր մանկության ընկերակիցների անդամաճան մտերմությունից՝ երբ մանկության մեր բո-լոր ընկերակիցները միայն մեզ համար էին ստեղծված, եւ մանկության արեւի այրող ջերմության ու արծաթափունջ ջրերի սառ-նության ոլորտներում դեռ քնած էին տղա-մարդու մեր տեսնաքնքները եւ անբռնելի էին, խաղողի հատիկների մեջ կուտակվող քաղցրության նման...

Երբ մանկության մեր բոլոր ընկե-րուկները գեղեցիկ էին, եւ երջանիկ անգիտության մեջ մեկի գեղեցկությունը

չէր ստվերում մյուսինը, այլ բոլոր գեղեցկություններն էլ ծաղկում էին իրա-րու լույսերի մեջ, եւ որքա՛ն փայլուն էր, Աստված իմ, որքա՛ն բուրունալի էր, որ-քա՛ն իր պայծառության մեջ ամբողջական երբեմնի մարգագետինների վրա խոնարի-ված մեր անկությունն ծառը...

- Ձեզ այնքան շա՛տ են գբաղեցնում, - ձեռքերն ազատելու այդ անհամարձակ շարժումները գինովության չափ հաճելի էին, եւ ինձ թվում էր, թե վերադառնում եմ նորից իմ տարիների քաղցրությանը, այն երանելի ժամանակներին, երբ մահճակա-լի վրայից վերցնում էի կատուն ու պահում էի ափերիս մեջ՝ չխնայելով մանկական դաժանությամբ իմ խոնարի ու անասուն արարածին, այլ երկար ժամանակ վայելե-լով նրա կատվային կոնքերի ջերմությունը, որը չէր ճշում, նույնիսկ չէր մլավում... ցա-վից:

- Ո՞վ:
- Շատ են զանգում, - ասաց Հասմիկը:
- Ի՞նչ գիտեք:
- Գիտեմ:
- Ոչ այնքան էլ՝ շատ...

Ես նկատելի մեղմությամբ շոյում էի նրա ձեռքերը, նա չէր խուսափում դրանից, բայց եւ չգիտեր. գիտե՞ր, թե՞ չգիտեր, թե ինչպես կուզենայի թաքցրած լինել այդ համարյա մանկական ամենողությունը՝ այդ ձեռքերը, ինչ-որ մի աներեւույթ աշխար-հում, որպեսզի ոչ մեկը չգտներ, չիմանար դրանց գոյությունը...

- Ես հիմա կզմամ լողանալու, - անզ-գույշ ասաց Հասմիկը, չգիտեր, թե ինչ գայթակղիչ խոստովանություն էր անում:

Լողանալու... Աստված իմ, դա հենց Հասմիկի պատանեկությունն էր, որը կու-զենայի ճանաչել, որովհետեւ վախճանում էի, որ դա ուրիշ, բոլորովին ուրիշ հեքիաթի արծազանք է՝ Հասմիկին սիրելու իմ ցան-կությունը:

### Մարզի գյուղեր

# Վերին Խոտանան. կա գյուղապահպանության խնդիր

ՍԿԻՉԲԸ ԷՋ 1

այսօր Շրվենանցի խաչմերուկից հետո քարուքանդ վիճակում է, ու հասկանալի է դառնում, թե ինչու ավտոբուսային կապ, երթուղու համար հայտարարվող մրցույթին ոչ ոք չի համարձակվում մասնակցել:

Վ.Խոտանան այսօր 102 տնտեսություն ունի, 236 բնակիչ, բայց գյուղապետի ասելով, իրականում բնակվողներն ավելի շատ են՝ վերջին մարդահամարի տվյալներով՝ 296 հոգի. շատերը հաշվառված չեն գյուղում: Հիմնականում Արցախյան ազատամարտի տարիներին վերին-խոտանանցիներից շատերը վերադարձան ու հաստատվեցին գյուղում, բայց նրանք Կապանում են հաշվառված:

Վերջին ծնունդն այստեղ անցած տարի էր՝ մեկ երեխա, ես մեկ մանկան լույս աշխարհ գալուն այս տարի են սպասում: «20 տարի առաջ, երբ սկսեցի աշխատել, համայնքում մոտ 65 երիտասարդ ընտանիք կար, այսօր՝ մոտ 10: Գյուղի երիտասարդները հիմնականում դուրս են գնում՝ Կապանի եւ Քաջարանի կոմբինատներում աշխատելու, հաստատվում են ու էլ չեն վերադառնում», - գյուղի ծերացման մասին ցավով ահազանգում է գյուղապետը:

Այստեղ այսօր երեք եւ ավելի երեխա ունեցող բազմազավակ ընտանիքներ էլ կան: «Պետությունն էլ պիտի գյուղ պահող նման ընտանիքներն ուշադրության կենտրոնում պահի, - շարունակում է մեր գրուցակիցը, - թե չէ, ինչի՞ մասն է, որ մեր բազմազավակ ընտանիքներից մեկը, որ երկրի համար ապագա հինգ զինվոր է մեծացնում, ամենաաղքատն է...»:

Գյուղի ընդհանուր տարածքը 1527,34 հա էր, վերջերս մարզային ենթակայության հողերը համայնքներին հանձնելուց հետո դարձավ 2320 հա, որից վարելահող է 103,14 հեկտարը, այգի՝ 9.69 հա, 81.96-ը խոտհարք է: Վերին Խոտանան համայնքն իր մեջ երկու բնակավայր է ներառում՝ Վ.Խոտանան եւ Նոր Առաջածոր (Չայգամի) գյուղերը, որտեղ ընդամենը երկու ընտանիք է բնակվում: Բնակավայրերն իրարից 3-4 կմ հեռավորություն ունեն:

Վ.Խոտանանի վարելահողերում ցանքս չի կատարվում, դրանք գլխավորապես թեթևաբույսեր են եւ հիմնականում որպես խոտհարք են ծառայում, իսկ Ն.Առաջածորում մոտ 30 հեկտարի վրա հացահատիկային մշակաբույսեր են ցանվում: Ի դեպ, Ն.Առաջածորում է գտնվում նաեւ «Դավիթբեկի» ջրամբարը, այդ ջրային հողերը (մոտ 32 հա) ես համայնքի սեփականությունն են, բայց, գյուղապետի հաղորդմամբ, համայնքին հարկ չեն վճարում՝ վկայակոչելով «ՀՀ հողային օրենսգրքը», ինչի համար համայնքի ղեկավարը պատրաստվում է դատարան դիմել:

Գյուղում բերք աճեցնելու եւ դրանով գումար վաստակելու համար բնակլիմայական համապատասխան պայմաններ չկան, ուստի գյուղացիները պարզապես իրենց կարիքների համար տնամերձեր են մշակում՝ բանջարաբուսատնային մշակաբույսերի բերք ստանալու համար: «Մեր անտառներում էլ միզում ու պտուղը որակյալ չեն, դրանք իրացնել չես կարող», - ասում է Կարեն Հակոբյանը:

Նրա կարծիքով, եթե գյուղում այսօր աշխատատեղ էլ ստեղ-

ծես, աշխատող չես գտնի, մարդիկ հետ են վարժվել դրանից. գյուղում հիմնականում տարեց մարդիկ են, որ աշխատել չեն կարող, երիտասարդներն էլ հեշտի հետեւից են ընկնում, նախածեռնող լինել չեն ուզում: «Հիմա երիտասարդներ կան գյուղից, որ ուրիշի համար ծիծաղելի գումարով ոչխար են պահում, բայց եթե նույն չարչարանքն օգտագործեին իրենց համար, կարող էին այստեղ ոչխարաբուծություն զարգացնել, ավելի մեծ գումար վաստակել»: Իսկ գյուղում, չնայած մանր եղջերավոր պահելու համար եղած լավ պայմաններին, ոչխար բուծող չկար, միայն վերջերս են սկսել քիչ քանակությամբ ոչխար պահել:

### Անասունները նվազում են. մթերում չկա

Վ.Խոտանան իր վարչական տարածքով, բնակլիմայական պայմաններով բարենպաստ պայմաններ ունի անասնապահության զարգացման համար: Բայց այսօր նրա բնակիչների համար լուրջ խնդիր է դարձել մասնաբերքի եւ կաթնամթերքի իրացումը, եւ տարեցտարի անասնազվաքանակը նվազում է: Եթե մի քանի տարի առաջ գյուղում կար 150, ապա այսօր՝ ընդամենը 92 կով: Անասնապահությամբ զբաղվելու դժվարությունների պատճառները է նաեւ գյուղի ծերացումը:

«Գյուղից կաթնամթերք կամ մսամթերք չեն տանում, - փաստում է գյուղապետը (ինքը գյուղի ամենաշատ՝ 10 կով պահողն է), - գյուղացին ինքը պիտի կարողանա դրանք հասցնել քաղաք, տրանսպորտի բացակայության, վատ ճանապարհների պարագայում, դա մեծահասակների համար խնդիր



ԼՈՒՍՏԱՆԱԳՐԸ Ա. ԿԱՊԵՍՅԱՆԻ

### ՍՅՅԵՍՏԵՍ ԿԱՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Ծնվել է 1969թ. Վերին Խոտանան գյուղում: Ութամյա ավարտել է տեղի դպրոցում, այնուհետեւ ավարտել Կապանի N7 միջն. դպրոցը (մաթեմատիկական թեթևակ դասարան): 1986թ. ընդունվել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի մեքենաշինության էկոնոմիկայի բաժինը, հետո գորակոչվել խորհրդային բանակ, ծառայել Ադրբեջանում, 1993թ ավարտել ինստիտուտն ու վերադարձել գյուղ: Մեկ տարի ռազմագիտության ուսուցիչ է աշխատել Վ.Խոտանանի միջնակարգ դպրոցում: 1994թ. ղեկավարեցին ընտրվել է Վ.Խոտանանի գյուղխորհրդի նախագահ, ՀՀ-ում համայնքների ձեւավորումից հետո՝ գյուղապետ՝ մինչ օրս: ՀՀԿ անդամ է: Ամուսնացած է, ունի երեք դուստր:



ԼՈՒՍՏԱՆԱԳՐԸ Ա. ԿԱՊԵՍՅԱՆԻ

է, իսկ մսի իրացման կետերում էլ միսն իրենց վաճառելիք գնից մի քանի անգամ ցածր գնով են ընդունում գյուղացուց, ինչը ձեռնտու չէ... Կաթնամթերքն էլ չի չացնելու համար պանիր են պատրաստում, էլի դժվարությամբ վաճառում»:

Կաթ մթերող ընկերությունները, եթե Գորիսի տարածքից մտնում են հարեւան Տանձավեր ու Աղվանի, այստեղ չեն հասնում, քանի անգամ դիմել են, պատասխանել են, որ ձեռնտու չէ:

Մի քանի անգամ փորձել են նաեւ դիմել կառավարությանը կամ դոնոր կազմակերպություններին՝ տեղում կաթի մթերման ու վերամշակման փոքր կետ հիմնելու համար, մերժել են. նման քիչ անասնազվաքանակը

ոչ ոքի չի հետաքրքրում:

### Գյուղի հիմնախնդիրները

Վերին Խոտանանը երբեք չի ունեցել եւ այսօր էլ ոռոգման ջուր չունի: Խմելու ջուր էլ տարիներով չեն ունեցել, եւ միայն 1996-ին Հայաստանի սոցիալիզմի հիմնադրամի աջակցությամբ, հինգ բնական աղբյուրի ջուրը հավաքելով եւ ջրատար կառուցելով, ջուր անցկացվեց, օրվա կարգավորիչ ջրամբար կառուցվեց: Համայնքը ջրի քլորացում կատարելու միջոցներ չունի, բայց տարին մեկ անգամ գարնանը ջրամբարում սանիտարական մաքրում են իրականացնում: Ջրի որակը ստուգել են, նորմալ է: Բայց ներկա

երաշտների տեմպը տարեցտարի չորացնում է նաեւ այդ աղբյուրները, որոնցից սնուցվում է գյուղի ջրամատակարարման համակարգը: «Կարծում եմ՝ նաեւ անտառների ոչ ծիշտ շահագործման հետեւանցով են դրանք չորանում, եւ այսօր էլի խմելու ջրի խնդիր ունենք: Ի վերջո, այդ ջրով են նաեւ ամռանը ոռոգվում տնամերձերը: Եվ դա սեզոնում այնքան քիչ է լինում, որ արդեն չի հերիքում բոլորին...», - համայնքի լուրջ խնդիրների շարքը շարունակում է պարոն Հակոբյանը: Խմելու ջրի բավարար քանակ ապահովելու ելքը ջրատարին այլ աղբյուրներ միացնելն է: Անցած տարի նման մեկ աղբյուր «Վորլդ Վիժնի» Կապանի ՏՁԾ օժանդակությամբ միացրել են, բայց խնդիրը հրատապ է մնում. դրամական միջոցներ են պետք... Համայնքային բյուջեն այնքան սուղ է, որ նրանով գյուղում ոչ մի խնդիր չես լուծի: Ավելին, գյուղապետի հավաստմամբ, նույնիսկ աշխատավարձի խնդիր ունեն:

Տարեկան բյուջեն 4մլն դրամ է, որից 3,5 միլիոնը պետական լրավճարն է: 500 հազար դրամի սեփական եկամուտները հավաքում են 100 տոկոսով: «Բյուջեն միայն աշխատավարձին է հերիքում, ծախսային այլ մաս չունենք: Օրինակ, գյուղապետարանի շենքը կառուցված է 1980-ականներին, տանիքը ահավոր վիճակում է, ոչ մի անգամ չի նորոգվել, բայց մեկ ասքոչիֆերի գումար էլ չունենք», - տեղեկացնում է համայնքապետը:

Նա նման գյուղերի խնդիրների չլուծման պատճառներից է համարում «Համահարեցման մասին ՀՀ օրենքը», որը մինչեւ 300 բնակիչ ունեցող գյուղերին նույն լրավճարն է հատկացնում. մինչդեռ պարզ է, որ ասեք 100 եւ 300 բնակիչ ունեցող գյուղերի ծախսերի ծավալները տարբեր են, տարբեր են նաեւ գյուղերի հրատապ լուծում պահանջող խնդիրները: Նույն լրավճարը ստացող գյուղեր կան, որոնց տարածքում հանքարդյունաբերական ձեռնարկություններ են գործում, վարձակալությամբ տրվող հողեր ունեն, հետեւաբար հավելյալ մուտքեր եւ

### Վերին Խոտանանի Սբ Աստվածածին եկեղեցին, որը կառուցել է Մովսես Խոտանանցի Ամենայն հայոց կաթողիկոսը XVII դարում

լրացուցիչ գումարներ ունեն համայնքում այս կամ այն աշխատանքը կատարելու համար:

Գյուղապետարանը հինգ աշխատող ունի (գյուղապետ, հաշվապահ, քարտուղար, հավաքարար, ակունքի աշխատող), բայց ինը ամիս է՝ քարտուղար էլ չունեն, որովհետեւ պաշտոնի անձնագիրը դրա համար բարձրագույն կրթություն է պահանջում, իսկ բուհավարտ որեւէ մեկն այս գյուղում աշխատելու ցանկություն չունի:

Ինչպես այլ գյուղերում, այստեղ էլ հողի սեփականաշնորհումից օգտված, բայց հողը չօգտագործող գյուղացիներ կան, որոնց տեղն էլ չգիտեն ու հողի հարկ էլ չեն կարողանում գանձել: 88 հողաբաժնից 31-ում նման փաստի են բախվում: «Կարող եմ վարչական դատարան դիմել ու բռնագանձել, բայց համա-գյուղացուս դեմ նման քայլի չեմ դիմի...», - ասում է Կ.Հակոբյանը:

Վերջին տարիներին՝ ջրատարի կառուցումից հետո, գյուղում որեւէ լուրջ աշխատանք ու ներդրում չի կատարվել, միակ համագործակցությունը «Վորլդ Վիժնի» կապանյան գրասենյակի հետ է, որը ժամանակ առ ժամանակ աջակցում է փոքր ծրագրերով:

### Ժամանակին կյանքի ճանապարհ էր

Գյուղ բերող ճանապարհը հանրապետական նշանակության է: Տարիներով այստեղ աշխատանք չի կատարվել: Գյուղապետը նշում է, որ եթե մարզային նշանակության լինեք, միգուցե տարածքային մարմինների ուշադրությանն արժանանար, գոնե փոսային նորոգումներ կանեին: Մինչդեռ այն ավելի կարճ ճանապարհով է Տաթևը կապում Կապանի եւ մարզի մյուս հարավային բնակավայրերի հետ, եւ հոգեւոր այս կենտրոն այցելողները ժամանակ խնայելու համար, այնուամենայնիվ, գերադասում են երթելով այս ճանապարհով, քան հասնել Գորիս: Գյուղից տեսանելի են նաեւ հանդիպակաց անտառում կատարված հողային աշխատանքը, փորված ճանապարհը. պատերազմական տարիներին սկսվեց գյուղը շրջանցող ավելի կարճ նոր միջպետական մայրուղու կառուցման աշխատանքը, որն այդպես էլ կիսատ մնաց:

Մի քանի անգամ փորձել են հողով լցնել փոսերը... Միակ հույսը, թե երբեւէ ճանապարհը կնորոգվի եւ գյուղի մեռնող վիճակին վերջ կտրվի, «Հյուսիս-Հարավ» ճանապարհն է, որի մասին խոսակցությունները շատ են, եւ ենթադրվում է, որ այստեղով կանցնի, բայց որի շինարարական աշխատանքներում դեռեւս կոնկրետություն չկա: Մինչդեռ նորմալ ճանապարհի դեպքում գյուղացիներն ավելի հեշտորեն կերթեւեկեին դեպի Տաթև՝ գրոսաշրջային կենտրոնում նաեւ իրենց մթերքի իրացման հարցը լուծելով:

Բնականաբար, անմխիթար վիճակում ոչ միայն մայրուղին է, այլեւ՝ գյուղամիջյան ճանապարհները: Իսկ գյուղից Կապան հասնելու համար տրանսպորտ չի աշխատում, մարդիկ, մի քանի հոգով հավաքվելով, օգտվում են մասնավոր մեքենաներից:

### Ելքը խոշորացումն է

Ի տարբերություն համայնքների խոշորացման հայեցակարգի դեմ պայքարող համայնքապետերի՝ Վ.Խոտանանի ղեկավարը նման գյուղերի փրկությունը հենց համայնքների միավորումն է համարում. «Դեռ այն ժամանակ, երբ քննարկվում էր «ՏԻՄ մասին» ՀՀ օրենքը, եւ համայնքներ պիտի ստեղծվեին, ասացի՝ ամեն ծառի տակ համայնք մի՛ ստեղծեք: Հատկապես նման գյուղերը, որոնք իրենց խնդիրները համայնքային բյուջեով չեն կարող լուծել, առանձնացնելն իմաստ չունի: Ի՞նչ իմաստ ունի այդքան աշխատակազմեր պահելը: Օրինակ՝ ես 60 հազար դրամ աշխատավարձ եմ ստանում, ամաշում եմ. մեր արածն ի՞նչ է, գյուղում ոչ մի գլոբալ խնդիր չենք կարողանում լուծել... Մի թուշակառու էլ ես եմ: Մինչդեռ եթե մի քանի գյուղի աշխատակազմերին տրվող գումարները կենտրոնացնեն մի տեղ, նորմալ բյուջե կլինի, եւ դրանով ամեն տարի այդ գյուղերից մեկում մի խնդիր կլուծեն»: Գյուղապետը գյուղատնտեսության զարգացման ուղիներից է համարում նաեւ տնտեսությունների միավորումը, նորմալ կոպերացիան: Բայց քանի որ նման գյուղերում բնակչության մեծ մասը հիմնականում թոշակառու է, նրանք ընդունակ էլ չեն ֆիզիկական աշխատանքի ու գյուղատնտեսությամբ լուրջ զբաղվելու. «Իսկ գյուղում հիմա մնացած քիչ երիտասարդները, եթե անտառտնտեսության համար ծառահատման ժամանակավոր աշխատանքն էլ չլինի, էլի կհեռանան...»:

Գյուղի, ինչո՞ւ չէ՝ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՋ 8

